

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Ջ Ի Ի

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՍԶԻ 1892—
93 ՃԵՄԱՐ. ՏԱՐՈՒԱՅ ՀԱՄԱՐ

(Կարգադրութիւն 1893 թ. Յունիսի 12-ին.)

Յարգելի

«Դաստիարակութիւնը պօլիտիկայի ազնուագոյն ճիւղն է» ասում է մի նշանաւոր մանկավարժ—Տրապարակասօս, Հիմնուած հաստատուն սկզբ. բունքների վրայ, նա պատրաստում է ապագան և կերպարանափոխում է ամբողջ ազգի բնաւորութիւնը:

Մանկավարժութեան գլխաւոր նպատակն է՝ աշխատել, ազնուացնել մարդկութիւնը, ջանալ, որ մեր շուրջը և մեզնից յետոյ որչափ կարելի է քիչ լինի բարոյական աղքատութիւնն ու տանջանքներ և որչափ կարելի է շատ բաղտաւորութիւն ու սէր:

Եթէ այդպէս մեծ է դաստիարակութեան նշանակութիւնը բոլոր ազգերի համար ընդհանրապէս, ուրեմն որչափ ևս առաւել է քաղաքական ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդների համար, որոնք այլ ուժեղ գործօններ ինքնաձանաչութեան քան ուսումնարանները՝ չունին:

Կրթութեան նշանակութիւնը, եթէ ոչ կատարեալ գիտակցութեամբ, գոնեայ ինքնապաշտպանութեան բնագոգումից՝ ըմբռնել է և մեր ազգը՝ որին ապացոյց են դարումս հիմնած ուսումնարանները, թէ Հայաստանից դուրս և թէ նրա մէջ:

Այս վերջինները հայ ժողովրդի ընդհանրութեան մատչելի են, ուստի և աւելի մեծ ազդեցութիւն ունին նրա կրթութեան գործում. թեմական և ծխական դպրոցները մասնաւոր անձանց կամ բարերարների սեփականութիւն չեն, այլ պատկանում են հայ ժողովրդին, որը պէտք է լաւ իմանայ, որ երջանկայիշատակ Մատթէոս կաթողիկոսի կոնգրակներով և հաստատած կանոններով մեր թեմական ու ծխական դպրոցների կառավարութիւնը յանձնուած է իրան, ժողովրդին և նա իրաւունք ունի ներգործական մասնակցութիւն ունենալ իւր ուսումնարանների բարուրդման գործում, իսկ այդ կարող է անել նա, եթէ գիտակցօրէն վերաբերուի դէպի

Ժողովրդի կրթութեան գործը, իրան հեռու չը պահի ուսումնարանից, այլ ի մետոյ ծանօթանայ նրա ցաւերի ու կարիքների հետ և աշխատի հեռացնել նրա յառաջագիմնութեան խոչընդոտ հանգիսացող պայմանները—այդպիսի վերաբերութիւն գէպի ուսումնարանը պահանջում են Ժողովրդի ուսումնատենչ զաւակների շահերը, ապագայ սերնդի բաղդը և ազգի յառաջագիմնութիւնը:

Ղարաբաղի (շուշուայ) Հայոց Թեմական դպրոցը հնագոյն հայ ուսումնարանների և Ռուսաստանում այժմ գոյութիւն ունեցող հայ չորս սեմինարիաներից մէկն է: Այս ուսումնական տարում նա բոլորեց իւր յիսնամեայ գոյութիւնը, որի պատմութիւնը, չը նայած դպրոցիս մանկավարժական Ժողովի բուն ցանկութեան, չը յաջողուեց գրել. որովհետեւ մեր առաջարկութիւնը՝ Թոյլ տալ ուսումնարանի արխիւից օգտուել, մերժուեց սրբազան Առաջնորդի կողմից, որ յայտնեց, թէ մտադիր է ինքն գրել այդ պատմութիւնը. ուստի այս տարի էլ ես կը բաւականանամ հասարակութեան ներկայացնելով ինձ յանձնած Թեմական դպրոցի ուսումնական մասին միայն տարեկան տեղեկագիրը:

Ղարաբաղի Հայոց Հոգեւոր Թեմական դպրոցը այս ճեմարանական տարում բաւականին մեծ փոփոխութիւնների է ենթարկուել. հարկաւ հասարակութիւնը կուզենայ իմանալ, թէ որո՞նք են եղել այն շարժառիթները, որ անհրաժեշտ են կացուցել այդ փոփոխութիւնները:

Դեռ 1859 թուին Մատթէոս կաթողիկոսից հաստատուած դպրոցիս կանոնադրութեան ճակատին այսպէս է որոշուած մեր դպրոցի նպատակը. «Շուշուայ հոգեւոր դպրոցի նպատակն է, պատրաստել գլխաւորապէս հայաստանեայց եկեղեցւոյ համար արժանաւոր պաշտօնեաներ և առհասարակ հայոց հասարակութեան համար լուսաւոր և ուսեալ անդամներ»:

Վաղուց անցել է այն ժամանակը, երբ կարծւում էր որ «եկեղեցւոյ արժանաւոր պաշտօնեայ» լինելու համար բաւական է միմիայն կարգալիզել իմանալ և եկեղեցական ծիսակատարութեան տեղեկ լինել. հասարակութիւնը ինքը կրթութիւնով ու զարգանալով պահանջում է նոյնը և իրան հովուող հոգեւորականութիւնից, որի մտաւոր զարգացման աստիճանը յամենայն դէպս աւելի ստոր՝ քան հասարակութեան մտաւորը չը պէտք է լինի, եթէ միմիայն ուզում ենք որ հոգեւորականութեան, հեղինակութիւնն ու վարկը միմիայն նրա հագուստից կախուած չը լինի: Ահայդ է պատճառը, որ ժամանակի ոգին մեր միջնակարգ դպրոցների (Սեմինարիաների) ծրագրում, բացի կրօնական—հայկական աւարկաներից մտցրել է և ընդհանուր զարգացուցիչ աւարկաներ, առանց որոնց անհնարին է երեւկայել կրթութեան աստիճանի այն minimum—ը

որ կոչւում է՝ միջին, Միջին կրթութիւնը այնպէս, ինչպէս ըմբռնում է այժմ կրթութեան Եւրոպական սիստեմը՝ մի անհրաժեշտ հիմք է, առանց որի չի կարելի կառուցանել մտաւոր—բարոյական զարգացման ոչ մի հաստատ շէնք, Եւրաքանչիւր կրթուած անձ, առանց խտրութիւն գնելու նրա պաշտօնի և պարապմունքի մէջ, պիտի ունենայ առնուազն մտաւոր պտշարի այն քանակութիւնը, որ տալիս է միջնակարգ կրթութիւնը, Պարզ է, որ այն՝ ինչ ցանկալի է Եւրաքանչիւր կրթուած անհատի համար անհրաժեշտ և պարտաւորեցուցիչ պէտք է լինի մանաւանդ հոգևոր հովիւների համար, որոնք առաջնորդում են մի ամբողջ ժողովուրդ, Ուրեմն եթէ մինչև անգամ ընդունենք այն տեսակէտը, որ ընդհանրացած է հասարակութեան յայտնի խաւերում, որ մեր սեմինարիաների նպատակն է պատրաստել միմիայն եկեղեցւոյ պաշտօնեաներ, այդ դէպքում անգամ չը պէտք է մօռանանք, նախ որ սեմինարիան իւր ծրագրով միջնակարգ դպրոց է, ուր պիտի աւանդուին և այլ ընդհանուր դարգացուցիչ առարկաներ, և երկրորդ՝ որ դպրոցիս նպատակներից մինն էլ է.— «Տալ առհասարակ Հայոց հասարակութեան համար լուսաւոր և ուսեալ անդամներ»:

Աւերև առաջներից հասկանալի է, որ մեր թեմական Դպրոցները, պատկանելով իրանց նշանակութեամբ միջնակարգ դպրոցների կարգին, չը պէտք է այդ անունը կրեն լոկ անունով, այլ իրականապէս, իսկ դորա համար նոցա մէջ առարկաները պիտի աւանդուին որոշ ծաւալով և ուսուցիչները պէտք է ունենան որոշ ցենզ, և ոչ թէ զանազան, ուսումնարանի կոչման հետ կապ չունեցող հաշիւներ ի նկատի առնելով, ուսուցչական ծանր և պատասխանատու պաշտօնը յանձնուի պատահական և սեմինարիաներում աւարտած ու համապատասխան պատրաստութիւն չունեցող անձանց, Դա մի ընդհանուր մանկավարժական կանոն է, որ ուսուցիչը իւր կրթութեամբ պէտք է աւելի բարձր լինի այն դպրոցից, որտեղ նա ուսուցանում է. ուրեմն սեմինարական դասարաններում չի կարող աւանդել սեմինարիայի IV-րդ կամ VI-րդ դասարանից աւարտածը, այլ միայն բարձրագոյն կրթութիւն ստացած անձինք կամ առնուազն, Ճեմարանի Լսարաններում աւարտածները, Ահա մի սկզբունք, որ չը նայած իւր տարրականութեան, մինչև այժմ առնուած չէր ի նկատի:

Երկրորդ՝ որպէս զի ուսուցիչը ամբողջապէս նուիրուած լինի իւր պաշտօնին և օրէց օր կատարելագործուի և առաջագիմի նրա մէջ՝ պէտք է նրա ծանր և պատասխանատու աշխատութիւնը վարձատրուի այն չափով, որ նա իրա դիրքը ապահով համարի, տեղական և ազատ ասիական կամայականութիւնից, որ այնչափ ընդհանրացած է մեր ուսումնարանների կեանքում շնորհիւ առաջնորդի, հոգաբարձութեան, տեսչի և ուսուցիչների փոխադարձ յարաբերութեանց, պարտականութեանց և իրաւունքների անորոշու-

թեան, Հատ անկարգ և անյարմար է ուսումնարանի բոլոր զոյութիւնը հիմնել այն հաշուի վրայ, որ ուսումնարանական ասպարիզում գործող մարդիք պէտք է միշտ անձնագոհութեան քաջագործութիւններ ցոյց տան և ապրին «Որպէս թոչունք երկնից»։ Մասնաւորացնելով խնդիրը և ուսուցչի միմիայն տնտեսական ապահովութեան մասին խօսելով, որովհետեւ այս կողմերը պահանջում են աւելի հիմնական փոփոխութիւններ մեր ուսումնարանների կարգ ու կանոնների մէջ և այդ կախուած է բարձր հոգեւոր իշխանութիւնից, պէտքէ ասել, որ ուսումնարանի բիւզժէն կազմելիս չի կարելի ղեկավարուել բացարձակ խնայողութեան սկզբունքով, ինչպէս սովորութիւն է դարձած հայ ուսումնարանների մեծամասնութեան վարչութիւնների համար, որովհետեւ զրկել ուսումնարանը այն բոլորից, ինչ անհրաժեշտ է, որ նա յաջող հասնի իւր բուն նպատակին՝ նշանակում է ժողովրդի կրթութեան գործին հասցնել մեծ և փտանգաւոր հարուած։ Եթէ մի կանոնաւոր հոգեւոր դպրոց պահելու համար անհրաժեշտ եկամուտը չկայ՝ պէտքէ ամեն ջանք գործ դնել գտնելու, ստեղծելու նոր աղբիւրներ, եղածները եռանդով ժողովել, և ոչ թէ բաւականանալով այն եկամուտով, որ ինքն ըստինքեան առանց եռանդուն ներգործական միջամտութեան էլ հաւաքում է՝ աշխատել դեռ խնայողութիւն անել այն բիւզժէի մէջ էլ, որ կարելի է համարել կազմուած, ի նկատի առնելով minimum-ը այն պահանջների, որ պէտքէ դնուի միջնակարգ դպրոցի ուսումնական մասը կանոնաւորելու համար, այն էլ միմիայն յոյս դնելով ուսուցչական խմբի կամաւոր զոհաբերութիւնների վրայ

Աչքի առաջ ունենալով վերեւ բերած երկու սկզբունքները՝ այս ուսումնական տարում փոփոխութիւն կատարուեց ուսուցչական խմբի կազմութեան և ուսուցիչների աշխատութեան վարձատրութեան մէջ՝ այն չափով, որչափով ներուժ էր ուսումնարանիս այժմեան տնտեսականը։

1892—1893 ձեռար տարու հայրաքաղ շախչ չեղեւոր ժամական Վարդի ուսուցչական խումբը	Ուսուցչի աշուներ և ազգաններ :		Որտեղ են աւարտել իրանց ուսումը :	
1	Լեւոն Սարգսեանց		Կանդիտատ Մոսկուայի Համալսարանի ֆիզիկո մաթեմատիկական ֆակուլտետի :	
2	Արշակ Բարխուդարեանց		Աւարտած Մոսկուային Համալսարանի իրաւաբանական ֆակուլտետից :	
3	Եփր. Տէր-Յովսիփեանց		Մեխանիկ. Աւարտել է Խարկովի տեխնոլոգիական ինստիտուտում :	
4	Գէորգ Ղարաջեանց		Լիսանսիէի ասոփ. ճանով Աւարտել է ժընեւի Համալս. Հասգիտութիւնների բաժնում :	
5	Բագ. Սերովբեանց		Էջմիածնի ճեմարանի լսարանները :	
6	Սար. Ղուլիքեանց		Էջմիածնի ճեմարանի լսարանները :	
7	Նիկ. Մ.-Թանգեանց		Էջմիածնի ճեմարանի լսարանները :	
8	Սուր. Աթայեան		Այլ ուսուցչ. ինստիտուտում :	
9	Ստեփ. Գեմուրեանց		Ներսիս. դպրոցից և առանձին ունի վկայական Ձոյնագրութեան :	
10	Սամ. Գիւլպսեանց		Պոլսում :	
11	Բագ. Տէր-Սահակեանց		Ներսիսեան Գպրոցում :	
12	Տիգ. Տէր-Գրիգորեանց		Հարաբաղի թեմ. դպրոցում VI դ. գաս :	
13	Աղէք. ք. Բաղդասարեան		Հարաբաղի թեմ. դպրոցի IV դաս :	
14	Կարապ. Վարդապետեան		Հարաբաղի թեմ. դպրոց IV դաս :	

Ի՞նչ են աւանդուում:	Գ ա ս ե ր ի թ ի լ ը:			Բացի ուսուցչութեան ուրիշ արշատնը:	Տարեկան ռոճիկ:
	Լսել	Տրի	Գրել		
Բնական պատուութիւն, բնաբուսութիւն, մորգակազմութիւն և ֆիզ. աշխարհագրութիւն. (սեմինարական դասարաններում):	12	2	14	Տեսուչ Դպրոցի	1700
Ուսաց լեզու (Սեմինարական դասարաններում):	24	2	26	"	1200
Մաթեմատիկական առարկաներ, Տիեզերագրութիւն և ֆիզիքա (Սեմին. դաս)	19	1	20	"	950
Ընդհ. պատմութիւն, Ուսու. պատմութիւն և աշխարհագ., Տես. մատենագր. (Սեմինարական դասարաններում):	24	1	25	"	1200
Հայոց պատմութիւն, Մատենագրութիւն, Հայոց լեզու (Սեմինար. դասարան)	24	2	26	"	700
Եկեղեց. պատմութիւն (Սեմին. դաս. և Հ. լեզու, Կրօն (պատ)	24	1	25	Քարտուղար Մանկ. ժողովի	700
Հայոց լեզու, Հոգեբան. և Տնտեսութիւն մասին. (Սեմ. դաս.)	26	1	27	"	700
Ուսաց լեզու պատրաստականներում)	24	"	24	"	630
Զոյնագրութիւն (Սեմինարական դասարան.) երգ (պատրաստականներում):	17	2	19	Վերականգն.	600
Ֆրանսերէն (Սեմինար. դաս.) գծագրութիւն (պատրաստակ.)	21	"	21	"	500
Ընդհ. աշխարհագ. (Սեմինար. դաս.) թուարան. (պատրաստ.)	23	2	25	Գրագր. քանապետ	580
Հայոց լեզու պատրաստականներում և գեղագրութիւն.	21	—	21	"	350
Կրօնագիտութիւն (Սեմինար. դաս.)	22	2	24	"	400
Գեղագրութիւն (պատրաստ.)	6	"	6	Վերականգն.	300

Ինչպէս տեսնում էք, բացի իրանց դասերից, որ բաւական շատ էին, ուսուցիչներից 10 հոգի ստանձնել էին և ձրի դասեր, թուով 16: Այլապէս ուսումնարանի ընդժէն չէր թոյլ տալիս բանալ 1 զուգընթաց դասարան, թէև նրա գոյութիւնը անհրաժեշտ էր սեմինարական բարձր դասարանների բազմամարդութեան և ընդհանրապէս յաջող դասատուութեան տեսակէտից: Այդպիսով ուսուցիչների զոհաբերութեամբ մօտ 600 ուղբլի խնայողութիւն է եղել և 10510 ուղբլիով*) պահպանուել է մի ուսուցչական խումբ, որ և կառավարել է մի սեմինարիա 11 դասարաններով և մօտ 370 աշակերտով:

Ուսուցիչները, բացի իրանց դասերից, ձրիաբար կատարում էին իւրաքանչիւրը մի դասարանի դաստիարակի պաշտօն և հերթական օրապահութիւն դասամիջոցներում: Որովհետև 2 վերակացու քիչ էին հսկելու 11 անյարմար դասաւորուած դասարանների վրայ 370 աշակերտներով, իսկ աւելացնել վերակացուների թիւը չէր ներուած ուսումնարանի տնտեսականը: Ուսուցիչներից պ. Ս. Լուլիքեխեանցը, բացի այդ՝ կատարում էր մանկավարժական ժողովների քարտուղարի պաշտօն, իսկ պ. Բ. Տ. Սահակեանը՝ գրադարանապետի: Այդ երկու պաշտօններն էլ պահանջում են լուրջ վերաբերութիւն և բաւականին ժամանակ ու աշխատութիւն են խլում: Ուստի իմ առաջարկութեամբ հոգաբարձութիւնը ընդունեց վարձատրել իւրաքանչիւր այդ պաշտօնը 50 ական ուղբլիով:

Այս ուսումնական տարին, խօլբայի պաաճառով սովորականից ուշ սկսուեց ընդունելութիւնները և վերաքննութիւնները սկսուեցին սեպտեմբերի 15-ից, իսկ սեպտեմբերի 20-ից կանոնաւոր պարապմունքները դասարաններում, որ և տևեցին մինչև մայիսի 20-ը: Որովհետև IV և VI դաս. քննութիւնները թուով աւելի էին, ուստի այդ դասարաններում նրանք մայիսի 20-ից առաջ էին սկսուած որպէս զի այդ դասարանների քննութիւնները չը խանդարեն միւս դասարաններում կանոնաւոր պարապմունքներին՝ գրաւոր քննութիւնները նշանակուած էին առաւօտները, իսկ բերանացիները՝ որոնք աւելի ընթերականեր են պահանջում՝ երեկոները: Զր. նայած ուսման ուշ սկսուելուն, պարապած օրերի թիւը աւելի է եղել քան նախորդ տարիներում: Որովհետև շատ տօներ որ ուղբութիւն էր տօնել միմիայն Հուշում, այս տարի չը տօնուեցին, այնպէս որ՝ պարապմունք եղել է 169 օր կամ 8842 ժամ: չը հաշուած քննութիւնները և տօները:

Ամբողջ տարուայ ընթացքում ընդհանրապէս շտա քիչ դասեր են բաց թողել բոլոր ուսուցիչները, բացի պ. Ս. Գիւլջագեանից, որ փետրուարի կիսից սկսած ծանր հիւանդ պառկած է: Այդ ձեր և հիւանդ հին գործ-

(*) Զոհաշուած ծառանքի եւ տնտեսական ծախքերը:

չի ուսուցչութիւնը զառամեալ հասակում իր քայքայուած առողջութեամբ մի յանդիմանութիւն է հայ հասարակութեան, որ չի մտածում ապահովել իւր այն գործիչներին, որոնք երիտասարդ հասակում իրենց ամբողջապէս նուիրել են հասարակական գործունէութեան, իսկ ծերութեան ժամանակ՝ կարօտ են հանգիստ մի կտոր հաց վայելելու և մի տաք անկիւն ունենալու, առանց իւրեանց ոյժից վեր զբաղմունքների: Մեր առաջարկութիւնը տարուայ սկզբում՝ տալ նրան կենսաթոշակ և ազատել ուսուցչութիւնից, չը ընդունուեց հոգաբարձութիւնից միջոցների սղութեան պատճառով, ուստի և նա կրկին հրաւիրուեց ուսուցչութեան ի վնաս ուսումնարանի ուսումնական մասի: Պ. Գիւլզադեանի փոխարէն նրա հիւանդութեան ժամանակ, ֆրանսերէնից պարապում էր պ. Ադ. Մ. - Ղարաբեօղեանը, իսկ գծագրութեան դասերին պարապում էին իրանց առարկաներով այն ուսուցիչները, որոնք ազատ էին այդ ժամերում: Գիւլզադեանի հիւանդութեան պատճառով բաց թողած և չը պարապած դասեր եղել են 91, Բացի Գիւլզադեանից բոլոր մնացած ուսուցիչները բաց են թողել ընդամենը 67 դաս, այսինքն մի ուսուցիչ միջին թիւով 5 ժամ: Ամենից շատ բացակայել է Աղէք. քահ. Բաղդասարեանը, որ թողել է 33 դաս, առանց պ. Գիւլզադեանի և Աղէք. քահ. Բաղդասարեանի իւրաքանչիւր ուսուցչի ընկնում է բաց թողած 2, 9 ժամ: Բացակայութիւնները եղել են հիւանդութեան և ընտանեկան կամ քաղաքացիական յարգելի պատճառներով:

1892—1893 ճեմար. տարուայ ընթացքում մանկավարժական ժողովներ գումարուել են 20 անգամ՝ միշտ երեկոները, Այդ ժողովների մանրամասն արձանագրութիւնները գրուած մանկ. ժող. քաղովներին և վաւերացրած բոլոր անդամների ստորագրութեամբ՝ կազմում են առանձին մատեան, որից կարելի է ի մօտոյ ծանօթանալ այս տարուայ մանկավարժական ժողովների զբաղմունքների հետ: Մանկավարժական ժողովներում քննուելիք նիւթը, ինչպէս և օրը, առաջուց յայտնւում էր անդամներին, որ միջոց էր տալիս նրանց նախօրօք մտածել և պատրաստուել քննուելիք խնդիրների մասին կարծիք յայտնելու: Մանկավարժական ժողովների նիստերին ներկայ են եղել բոլոր անդամները, բացի պ. Գիւլզադեանից և պ. Գ. Ղարաջեանից, որ հիւանդութեան պատճառով բացակայել է 2 անգամ:

Մանկավարժական ժողովներում քննած բաղմաթիւ խնդիրները կարելի է բաժանել հետևեալ կարգերի.

I. Գասաւանդութեան եղանակների աւելի կատարեալ սիստեմների մշակութիւն. դորա համար զրած և քննուած էին հետևեալ խնդիրները:

1) Գործածուող դասագրքերի քննութիւն. 2) իւրաքանչիւր ուսուցչի դասաւանդման եղանակի քննութիւն. 3) փորձնական դասեր և նրանց քննութիւն. 4) յետադէմ աշակերտների դասեր չը սովորելու պայմանների քննութիւն. 5) միատեսակ և իրար հետ կապ ունեցող առարկաների ուսուցիչների յաճախելը իրար դասերին և ընդհանուր սխտեմի մշակութիւն. 6) համեմատութիւն իւրաքանչիւր ամսեակի աշակերտների յառաջագիմութեանը նախորդ երկամսեակի հետ՝ թոյլ կողմերը և նրանց պատճառների քննութիւնը:

II) Աշակերտների մտաւոր զարգացումը բարձրացնելու, ճաշակը կրթելու և աշխարհաստեղծութիւնը լայնացնելու նպատակով. 1) մեծ զարկ էր տրուած ընթերցասիրութեան զարգանալուն, դորա համար նախ գրագրանքը լրացրուեց անհրաժեշտ գրքերով և մշակուեց նոր կանոններ, որ դիւրացրեց նրանից օգտուելը կարգը. 2) V և VI դաս. աշակերտներին թոյլ տրուեց օգտուել բարեգործական ընկերութեան գրագրանքն ընթերցարանից. 3) Տօն օրերին և շաբաթուայ յարմար օրերում դասերից յետոյ, VI դաս. աշակերտները և մի քանի ուսուցիչներ փոքր դասարանների (Գ. պատրաստականիցիւնների և I ու II դաս) աշակերտների հետ բացատրողական ընթերցանութեամբ էին պարապում. իսկ շատ փոքրերի հետ (ա. և բ. պատ.) ընթերցանութիւններ էին լինում մոգական լապտերով (Գ). Որպէս զի V և VI դաս. աշակերտները ընտելանան լուրջ աշխատութեան և պատրաստուին փոքրի շատէ հասարակական գործունէութեան համար, այս տարի մտցրուած էին գրականական երեկոներ, ուր որոշ նիւթի վրայ (պատմական—գրականական) ցոյց տուած աղբիւրների ուսումնասիրութեամբ գրած մի աշակերտի աշխատութիւնը քննուում էր միւս աշակերտների (VI V և IV) և ուսուցիչների ներկայութեամբ, բացի այդ, VI դասարանի աշակերտները տալիս էին փորձնական դասեր, որ նոյնպէս ենթարկուում էր մանկավարժ. ժողովում բազմակողմանի քննութեան V դաս. աշակերտների ներկայութեամբ և մասնակցութեամբ. 3) Տօն օրերին մանկավարժ. ժող. որոշմամբ տրուեցաւ աշակերտական առաւօտ և թատրօն, կատարուեցին քաղաքից դուրս զբօսանքներ, Այս բոլորը իբրեւ զուարճութիւն, թարմացնում էին աշակերտների միտքը և սիրտը և, բացի այդ, ունէին կրթիչ ու զարգացուցիչ նշանակութիւն:

III. Կատիգօրիայի խնդիրներն էին ուսումնարանական կարգապահութեան վերաբերեալ խնդիրների, դորա համար եղան. 1) Գաստիարականների պարտականութիւնների աւելի որոշ բացատրութիւն. դաստիարակները պէտք է չը բաւականանային միմիայն իրանց դասարաններում աշակերտների երկամսեայ թուանշանները դնե-

լով նրանց յիշատակարաններում, այլ և մօտաւոր հսկող լինէին իրանց դասարանների մօտաւորի և բարոյականի վրայ, նոքա պէտք է չը թոյլ տային աշակերտներին դասերով ոյժից վեր ծանրաբեռնելը, ծանօթանային նրանց տնային կացութեան հետ, իւրաքանչիւր երկամսեակի ներկայացնէին մանրամասն տեղեկագիր իրանց յանձնած դասարանի յառաջագիմութեան մասին. 2) որպէս զի իւրաքանչիւր աշակերտ իմանայ, թէ որո՞նք են իւր պարտաւորութիւնները և ի՞նչ է պահանջում նրանից ուսումնարանի կարգապահութիւնն՝ մշակութեան և հրատարակութեան նրանց համար առանձին կանոններ, որև տպուած յիշատակարանների ձևով բաժանուեց աշակերտներին. 3) Առանց սիստեմի և առանց մանկավարժական կերպով տրուած պատիժները համարելով միմիայն վնասակար՝ մշակութեան առանձին սիստեմ պատիժների գործադրութեան նկատմամբ. 4) Մի ուսուցչի կողմից հնարաւոր համարելով սխալ գնահատութիւն աշակերտի գիտութեան՝ (որ աշակերտի աչքում անարդարութիւն թուալով, ծննցնում է նրա մէջ անվստահութիւն և ատելութիւն դէպի ուսումնարանական վարչութիւնը) իբրև միջոց աշակերտների գիտութիւնը աւելի ճիշտ և արդար չափելու, ընդունուեց նաև դասարանական վերաստուգիչ մասնախմբական քննութիւններ, մեծ մասամբ գրաւոր պատասխաններով, որովհետև ներկայ ծրագրով և դասերի բաշխմամբ անհնար է բերանացի դասարանական քննութիւնները յաճախ կատարել: 5) Գիտենալով, որ միմիայն ուսումնարանը անկարող է լոկ իւր միջոցներով ազդել աշակերտի վրայ, որը օրուայ մեծ մասը ընտանիքումն է անցկացնում, եթէ այս վերջինս օգնութեան չը հասնէ ուսումնարանին և միւս կողմից անյարմար համարելով ներկայ հանգամանքներում գումարել ծնողական ժողովներ՝ վարչութիւնը բուականանում էր որչափ կարելի է յաճախակի խորհրդակցութեան հրաւիրել ծնողներին և խնամակալներին. 6) Երկու վերակացունների հսկողութիւնը անբաւարար համարելով և միւս կողմից ի նկատի առնելով ուսումնարանի տնտեսականը՝ առաջարկուեց, որ ուսուցիչները դասամիջոցներին հերթով կատարեն օրապահութիւն, որ և ինչպէս վերև յիշատակեցի, յանձն առան ձրի:

IV Գ ա լ ո վ ա շ ա կ եր տ ն եր ի կ ա ց ու թ իւ ն ը բ ա րւ ո ք եւ լ ու խ ն դ ր ի ն. Մանկավարժական ժողովը 1) յարուցել է և աշխատել գործնականապէս իրագործել աշակերտական ապաստարանի խնդիրը, Բանը նրանումն է, որ դպրոցիս նախկին վարչութեան կողմից մի քանի տարի առաջ բարձր հոգևոր կառավարութիւնից թոյլտուութիւն է խնդրած ապաստարան բանալու, չը նայած որ դպրոցիս կանոնադրութեան V գլ. 2 յօդ. ուղղակի այդ իրաւունքը տուած է դպրոցիս հոգարարձութեան և ամեն բան կախուած էր միայն նրա նախաձեռնութիւնից, բայց

որովհետեւ խնդիրը այդ կերպարանքն է ստացած և դեռ մինչև օրս բարձր
 և ոգևոր իշխանութիւնից պատասխան չը կայ, ուստի վճռել այդ խնդիրը
 այնպէս, ինչպէս թոյլատրուած է վերոյիշեալ յօդուածը, այլ ևս անյար-
 մար էր գտնում հոգաբարձութիւնը, ուստի մտածուեց մանկ. ժող. կողմից
 գործնականապէս վճռել այդ գիւղական աղքատ աշակերտների համար վե-
 րին աստիճանի անհրաժեշտ ձեռնարկութիւնը. փորձ փորձուեց աշակերտա-
 կան մասնաւոր բնակարան պահել վարչութեան հոկոդութեան տակ, բայց
 որովհետեւ սկզբնական ծախքերի համար պահանջուած 300 ռ. անկարելի
 եղաւ հաւաքել և գիւղացի աղքատ աշակերտների մեծ մասը ուսում
 տար. ուշ սկսուելու պատճառով արդէն տարով կապուել էին իրանց պա-
 հող ընտանիքների հետ, այդ պատճառով յետաձգուեց նրա բացումը մինչև
 գալ տարի և բարեգործական տեղական ճիւղում արծարծուեց այդ ձեռ-
 նարկութեան օժանդակելու խնդիրը, 2) Մտնելով դպրոցիս չքաւոր աշա-
 կերտների անմխիթար տնտեսական դրութեան մէջ, որ ի մօտոյ ծանօթ
 էր մանկավարժական ժողովին դաստիարակներից տուած տեղեկութիւննե-
 րից և վարչութեան ծանօթութիւնից չքաւոր աշակերտների ծնողների
 հետ՝ որոշուեց տալ չքաւոր աշակերտների օգտին ներկայացում, որ և
 կայացաւ փետրուարի 4-ին և ստացած 189 ռ. 10 կ. զուտ արդիւնքով
 գնուեց հագուստի կտոր 45 աշ. համար, գլխարկ, 15 աշ. կօշիկներ, 3
 աշ. համար, դասարանական պիտոյքների 2 աշ. համա- և 53 ռ. բաժա-
 նուեց դրամով, Բացի այդ, նուէր ստացել է Ջատկին՝ Ղազանչեցւոց
 եկեղեցւոց դպրոցիս երգեցիկ խումբը՝ 20 ռ. երկու հանգուցեալներից
 երգեցիկ խմբին 45 ռ. և մի հացկերոյթում հաւաքուել է և յանձնուել
 դպրոցիս վարչութեան չքաւոր աշակերտներին օժանդակելու համար 29
 ռ. Աւրեմն թէ ներկայացումներից և թէ նուէրներից ստացուել է 283
 ռ. 10 կ.

V. Աշակերտների ֆիզիքական զարգացման մասին ուսում
 նարանը աւելի քիչ ուշադրութիւն չը պէտք է դարձնի, քան մտաւորի
 Մանկավ. ժողով. խորհրդակցութեան նիւթ էր դարձրած և այդ խնդիրը
 Լաւ եղանակներին մեծ դասամիջոցը երկարացնում էր և աշակերտները
 բաց օդում մարմնամարզական շարժումներ էին անում մի ուսուցչի ղե-
 կավարութեամբ և խաղում էին նպատակայարմար կերպով կազմակերպուած
 տեղական խաղեր, որ արդի մանկավարժութիւնը, մասնաւոր Մեզլիս-
 յում, գերադասում է զուտ մարմնամարզական շարժումներից, Բացի
 այդ, դարնանք աշակերտները տանում էին քաղաքից դուրս, ուր աւելի
 մեծ յարմարութիւններ կայ բարդ խաղեր իրականացնելու, Յաճախ նաև
 աշակերտները գնում էին ուսուցիչների և վերակացունների հետ քաղաքիս
 շրջակայքը զրօսնելու և բնապատմական ժողովածուներ հաւաքելու, Սա-

կայն և կարճ դասամիջոցներին անհրաժեշտ էր, որ երեխաները բացօդում խաղալով կազդուրուին և թարմանան։ Ուսումնարանի բակը փոքր լինելով 370 աշակերտի համար, մեր առաջարկութեամբ ընդարձակուեց, ծանկութիւն կար նաև աշակերտների ֆիզիքականի մասին բժշկական մարդարանական վիճակագիր կազմել, բայց որովհետև ուսումնարանը չունի բժիշկ, ուստի և մնաց անգործագրելի։

IV. Բացի վերոյիշեալներից, մանկավարժական ժողովը զբաղուել է և ուսուցչական փոխատու — խնայողական գանձարանի և ուսումնարանի 50 ամեայ պաամութիւնը գրելու խնդրներով։

Վերջացնելով մանկավ. ժողով. զբաղմունքների այս համառօտ տեսութիւնը չեմ կարող այստեղ հրապարակապէս չըյայտնել խորին շնորհակա կալութիւնս ամբողջ ուսուցչական խմբին, որ անձնուիրաբար, սիրով և օրինակելի համերաշխութեամբ ամբողջ տարին գործում էր և իր ոգևորութիւնը հաղորդում էր և աշակերտներին։

Աշակերտների թիւը 1892—93 ձեմ. տար. ընթացքում եղել է 375, Իրանց կամքով թողել են դպրոց տարուայ ընթացքում 22 հոգի և վախճանուել է 1 հոգի, այնպէս որ տարուայ վերջը՝ քննութիւններից առաջ ուսումնարանում կային 352 աշ. որոնցից 200 Հուլեցի (58%), 149 գիւղացի և 3 պարսկաստանցի։ Ըստ դասարանների՝ աշակերտները ձեմ. տարուայ վերջը հետևեալ կերպով էին բաժանած։

Ա. Պատրաստական	62.	} Պատրաս. դասար.
Բ. Հիմ. պատրաստական	53.	
Բ. Զուգ. պատրաստական	53.	
Գ. Պատրաստական	58.	
I. Հիմն. դասարան	31.	} Սեմինար. դասար.
1. Զուգ. դասարան	29.	
II. Դասարան	21.	
III. Դասարան	13.	
IV. Դասարան	14.	
V. Դասարան	5.	
VI. Դասարան	7.	

(Անցեալ տարի եղել է 324 հ.)։

Ըստ ծնողների պարապմունքների՝ աշակերտները բաժանում են հետևեալ կերպով.

Արհեստաւորների զաւակներ	127
Առևտրականների	88
Երկրագործների	41
Հոգևորականների	37

Որբեր	31
Մանր ծառայողների	20
Ծառաների	8

Ըստ վճարի աշակերտները բաժանուում են 4 կարգի.

2րիավարժներ	87
Տարեկան 4. բուրլի վճարողներ	82
Տարեկան 8 բուրլի վճարողներ.	74
Տարեկան 12 բուրլի վճարողներ	123
2են վճարել	9

1892—1893 ճեմար. տար. սկզբում ցանկութիւն են յայտնել դպրոց մտնել 149 հոգի, քննութեան ենթարկուելով՝ ընդունուել են 90 հոգի, Յունուարին ցանկութիւն են յայտնել դպրոց մտնելու 32 հոգի, քննութեան ենթարկուելով՝ ընդունուել են 14 հոգի, Ընդամենը այս ուսումնական տարում ցանկութիւն են յայտնել մտնելու Ղարաբ. Թեմակ. դպրոցը 181 հոգի, իսկ ընդունուել են 104 հոգի, այսինքն 57%: Մտնողներից 90-ը պատրաստականներում են ընդունուել և 14-ը դասարաններում (I. և II.):

Պէտք է խոստովանուել, որ ուսում տարուայ սկզբում աշակերտներին աւ- յայտ էր ուսումնական կարգապահութիւնը. մանաւանդ դասերից ուշանալու և առանց յարգելի պատճառների բացակայելու նկատմամբ, աշակերտի համար սովորական երևոյթ էր գալ ուսումնարան մի երկու դասից յետոյ և ասել թէ « տանը կամ բաղարումը գործ ունէի », նոյնպէս մի առանձին պարտադանցութիւն չէր համարուում առանց յարգելի պատճառների բացակայելը: Արշուութիւնս հենց տարուայ սկզբում մեծ ջանք գործ դրեց այդ սովորութիւնը վերացնելու, խիստ պատասխանատուութեան ենթարկելով զանցառու աշակերտներին կամ անուղղայ աշակերտներին ժամանակաւորապէս հեռացնելով ուսումնարանից, մինչև որ ծնողները չէին երաշխաւորում իրանց որդւոց ճշտապահութեանը: Արդէն երկրորդ քառորդից նկատուում էր աշակերտների կողմից ճշտապահութիւն, այնպէս որ՝ ամբողջ տարին մի աշակերտի վրայ ընկնում է բաց թողած 28, 1 դաս. որպէս զի համեմատենք այդ թիւը ուրիշ ուսումնարաններում եղածի հետ, ես բերեմ օր. մեր Ըուշուայ ընկալական ուսումնարանը, որ գտնուում է միևնոյն կլիմայական՝ բայց ուրիշ կողմերից ա. ելի նպաստաւոր պայմաններում, այդ ուսումնարանում մի աշակերտի վրայ ընկնում է 52, 7 բաց թողած դաս, Պէտք է այն էլ ի նկատի ունեննել, որ բաց թողած դասերի հաշուի մէջ մտնում են և այն բաց թողած դասերը, երբ աշակերտը իւր ծը-

նորը՝ վարչութեան պահանջին հակառակ՝ չը կանչելու համար կամ ուսման վարձը շատ ուշացնելու և պահանջած հագուստով չը գալու պատճառով՝ ժամանակաւորապէս հեռացնուած էր Դպրոցից։

Աշակերտների գիտութիւնը ճիշտ և արդար որոշելու և նրանց դասարանից դասարան փոխադրելու համար՝ ընդունուած էր գնահատութիւն տարեկան թուանշաններով, որ դնելիս ուշք էր դարձնուած նաև դասարանական վերաստուգիչ քննութիւնների վրայ։ Սակայն Գ. պատ. IV և VI դասարաններում ընդունուած էր նաև տարեկան քննութիւնները, որովհետև այդ դասարանները ներկայացնում են դասընթացների մի մի ամբողջացրած շրջաններ, ուստի թէ դասընթացների ամփոփման տեսակէտից և թէ յաջորդ շրջաններում լաւ պատրաստուած աշակերտներ ունենալու ցանկութեամբ դրդուած, կարեւոր էր համարուած այդ դասարաններում աւելի խիստ ընտրութիւնը, Բացի այդ դասարաններից, քննութիւնը կատարուած էր և այն դասարաններում, ուր մի առարկան վերջանում էր և սեմինարական դասընթացքում այլ ևս չէր կրկնուելու։

Ճեմարանական տարուայ վերջում մանկավարժական ժողովի գնահատութեամբ և որոշմամբ փոխադրուեցին

Վերաբերումը ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ	Վերաբերումը ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ	Վերաբերումը ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ	Վերաբերումը ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ	Վերաբերումը ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ	Վերաբերումը ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ	Վերաբերումը ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
Ա.	62	40	9	8	5	
պատ. Բ. ճեմ.	53	23	13	13	4	
պատ. Բ. Զուգ.	59	27	12	11	9	
պատ. Գ.	58	18	24	13	3	
պատ. I. ճեմ.	31	14	5	7	5	
պատ. I. Զուգ.	29	9	12	6	2	
պատ. II.	21	12	6	3	0	
պատ. III.	13	5	6	2	0	

IV. դաս.	14	3	7	4	0
V. դաս.	5	3	2	0	0
VI. դաս.	7	7	0	0	0
Գումար	352	161	96	67	28
%	100	45,7	27,2	19,1	8

Արձակուածների այդ մեծ թիւը մի անխուսափելի չարիք էր, որ սակայն անհրաժեշտ էր, որպէս զի ուսումնարանը միանգամից բարձրացնի իւր անկարգ և անուանարկ դրուժիւնից, Արձակուած են այն աշակերտները, որոնք երկրորդ տարին լինելով նոյն դասարանում, զգալի յառաջադիմութիւն ցոյց չը տուին և այս տարի. այդպիսիները բացառապէս պատրաստականներում և առաջի դասարանումն էին, ուր՝ տեղի պակասութեան պատճառով, շատ աւելի օժտուած երեխաներ չէին ընդունուում: Շատերին դոցանից իրաւունք տրուեց ամառը պատրաստուիլ յաջորդ դասարանը մտնելու համար: Բացի այդ, կային աշակերտներ, որոնք նախորդ վարչութիւնների օրօք ընդունուած լինելով առանց ուշք դարձնելու նոցա տարիքի վերայ (մետրիքական չէր պահանջում) և վերին աստիճանի ծոյլ և անընդունակ լինելով, նստած էին իրանց տարիքին անհամապատասխան դասարաններում, օր. 17—18 տարեկան պատանին՝ պատրաստականներում և 22 տարեկան երիտասարդը՝ 1ին դասարանում: Եթէ այդ աշակերտները այս տարի առաջադիմութիւն ցոյց տուած լինէին, ի հարկէ նրանց ազատ թողլ կը տրուէր, չը նայած հասակի մեծութեանը, շարունակել իրանց ուսումը և աւարտել, սակայն այդ հասակում կրկին նորանց պահել նոյն դասարաններում, նշանակումէ խրախուսել ծուլութիւնը և պահպանել անփոփոխ ուսումնարանի անկարգ դրուժիւնը, Խիստ քննութիւնների միակ նպատակն էր հաւասարացնել և բարձրացնել դասարանների կազմութիւնը և մակերեւոյթը, Տարուայ ընթացքում ոչ մի աշակերտ չէ արձակուել վատ վարքի համար, Որովհետեւ ոչ մի դէպք չի պատահել, որ աշակերտական սովորական չարութիւնից աւելի լինէր, Ընդհակառակն, աշակերտների մէջ նկատուում էր մի առանձին յարգանք ու սէր դէպի վարչութիւնը ու ամբողջ ուսուցչական խումբը և գիտակցական վերաբերմունք դէպի իրանց պարտականութիւնները և ուսումնարանական նոր կարգ ու կանոնները:

Այս ճեմարանական տարում աւարտեցին սեմինարական ամբողջ դասընթացը՝ յաջող քննութիւններ տալով՝ հետեւեալ աշակերտները.

- 1) Աւագեանց Մարգարէ.
- 2) Գաբրիէլեանց Յովնան.
- 3) Միրզայեանց (Հասնաղարեանց) Ասլան.
- 4) Մահտեսի - Բաբայեանց Մարտիրոս.
- 7) Ուլբարեանց Խոսրով.
- 5) Տէր Յակովբեանց Մելիքսէթ.
- 6) Տէր Պօղոսեանց Իսահակ:

Գոցանից մի քանիսը կարօտ են հասարակութեան օժանդակութեան, որպէս զի շարունակեն իւրեանց ուսումը աւելի բարձր ուսումնական հաստատութիւններում և լինել ապագայում օգտակար անդամներ հասարակութեան:

Գալով աշակերտների առողջապահական դրութեան, պէտք է իմանալ, որ երթեմէ գպրոցներում, ինչպիսին է մերը՝ աշակերտների առողջապահական դրութիւնը կախուած է երկու պայմաններից. 1) ուսումնարանում տիրող առողջապահական պայմաններից և 2) տնային առ. պայմաններից: Ինչ վերաբերում է տնային պայմաններին, յայտնի է, որ մեր գպրոցի աշակերտների ահագին մեծամասնութիւնը, լինելով չքաւոր ծնողների զաւակներ, ապրում են վատ և խոնաւ բնակարաններում, չունին բաւականաչափ լաւ սնունդ և տաք մաքուր հագուստ: Քիչ չի նըպաստում այդ պայմաններին աւելի ևս վատթարանալուն և այդ դասակարգի ծնողների մէջ առողջապահական տեղեկութիւնների կատարեալ բացակայութիւնը: Ինչ վերաբերում է ուսումնարանի առողջապահական պայմաններին՝ պէտք է յայտնել, որ այն ինչ կարելի էր ուսումնարանիս ներկայ տնտեսական և վարչական հանգամանքներում անել՝ արուեց. նախազգուշական միջոցներ ձեռք առնուեցան խօլերայի դէմ: Խմելու ջրի և դասարանների օդի մաքրութեան ինչպէս և աշակերտների հագուստի վրայ առանձին ուշք դարձրուեց: Աշակերտների մեծ մասը յաճախում էին գպրոց կեղտոտ ցնցոտիների մէջ կողոլուած և ով ինչպէս ցանկանում էր, իսկ ոտերին ունէին չմշկներ (քեօշեր), 2մշկների դործածութիւնը իսպառ արգելուեց, իբրեւ մի տգեղ, հակառողջական և ուսումնարանում անյարմար ոտնաման, իսկ հագուստը պահանջում էր միաձեւ և մաքուր: Յայտնի է ընդհանուր առողջապահութիւնից, թէ որչափ մեծ դեր է կատարում մարդու մանաւանդ կեղտոտ հագուստը սենեակի օդի ապականութեան վերաբերութեամբ: Աշակերտները չունենալով առանձին տեղ վերարկունների և կրկնակօշիկների համար, այդ բոլորը տանում էին իրանց հետ դասարանը և դորանով աւելի ևս ապականում օդը: շինուեց առանձին

տեղ կրկնակօշիկներ պահելու և վերարկունները կախելու համար, Բաց կան ուսումնարանում և շատ ուրիշ հակառողջապահական կողմեր, որոնց փոփոխելու համար հարկաւոր են աւելի մեծ միջոցներ և իրաւունքներ, քան ունի վորչութիւնս: Դորքա են:

1) Ուսում: շինութեան ներդրածութիւնը, Ղարաբաղի Թեմական Գըպ-րոցը բաղկացած է 3 պատրաստական և 6 սեմինարական դասարաններից, Երկրորդ պատրաստականը և 1-ին դասարանը ունին նաև զուգընթացներ, ուրեմն ընդամենը դասարանների թիւն է 11: Բացի այդ հարկաւոր է մի ուսուցչական սենեակ, մի տեսչական, մի գրադարան և մի դահլիճ՝ դասամիջոցներին աշակերտներին հանգստանալու համար: Ուրեմն հարկաւոր են 15 սենեակ, մինչդեռ ուսումնարանիս յատկացրած մասում կայ ընդամենը 12 սենեակ և երկու փոքրիկ նախասենեակներ, ճարահատեալ, տեղի պակասութեան պատճառով, երկու նախասենեակներից մէկը դարձրած է տեսչական սենեակ, իսկ միւսը V-րդ դասարան: Այսպէս թէ այնպէս, եղած դասարանների ծաւալը է 1745,55 խոր. մետր. այնպէս որ 1 աշակերտին ընկնում է 4,65 խոր. մետր, այսինքն այնչափ, որչափ ուսումնարանական առողջապահութիւնը ընդունում է իբրև minimum, ուրեմն դասարանները ծաւալի կողմից կարելի է միջակ համարել: Գլխաւոր անյարմարութիւնն այն է, որ չկայ առանձին մի դահլիճ, ուր աշակերտները հաւաքուեն դասամիջոցներին վատ եղանակին, մինչև որ դասարանների օդը մաքրութիւն ստիպել վատ եղանակներին, որ աշակերտները մնան դատարաններում, նշանակում է փչացա՞ծ օդը անտանելի դարձնել նրանց շարժումից բարձրացած թողի շնորհիւ, իսկ անշարժութեան մատնել աշակերտներին՝ նշանակում է չըմբռնել մարդասիրական, մանկավարժական և առողջապահական ամենատարրական պահանջները: Ճարահատեալ աշակերտները խառնւում են սանդուղքների վրայ կամ՝ վատ եղանակներին՝ դուրս գալիս բակը:

2) Զմեռը ջերմութիւնը դասարաններում անկարելի է համահաւասար դարձնել, որովհետև նախ շինութիւնը չունի յարմարութիւններ և երկրորդ՝ վառարանները երկաթէ են:

3) Վահկարասիքը անյարմար է, նեղ և շինած հակառակ ուսումնարանական առողջապահական պահանջներին: այդպիսի նստարանները պատճառ կարող են լինել ողնաշարի ծռուելուն, կրծքացաւի և կարճատեսութեան զարգանալուն: Այս տարի հնարաւոր եղաւ միայն մի քանի նոր նստարաններ շինել տալ, Եթէ իւրաքանչիւր տարի մաս մաս փոխուեն հին նստարանները, ժամանակով կարելի կը լինի ազատուել այժմեան վնասակար նստարաններից:

4) Յատակը թէև տախտակամած է, բայց վերին աստիճանի անյարթ

և խորդ ու բուրդ, որը դժուարացնում է մաքրել այնպես, որ բաւակա-
նաչափ փոշի չը մնայ:

5) Ուսումնարանը չունի բժիշկ, որ կանոնաւոր յաճախի յայտնի ժա-
մանակներում դպրոցը: 2ը նայած տարուայ սկզբից արած մեր առաջար-
կութեան, հոգաբարձութիւնը անկատար թողեց այդ անհրաժեշտ պահան-
ջը և միայն յարգելի բժ. Խ. Բահաթրեանի բարեսրտութիւնից կարելի
եղաւ օգտուել չքաւոր աշակերտների համար հարկաւոր դէպքերում ըը-
ժըշկական օգնութիւն խնդրելու:

Մի դպրոցում ուսուցչական խումբը, կարգապահութիւնը, դասարանների
համապատասխան կազմութիւնը և առողջապահական դրութիւնը կարող
են բաւարար լինել, սակայն այնու ամենայնիւ նա չի կարող յաջող հաս-
նել իւր նպատակին, եթէ չունենայ կանոնաւոր կազմակերպած գրադարան
և ֆիզիքական — բնապատմական կարիներ, որոնք անհրաժեշտ օժանդակ-
ներ են թէ արդիւնաւոր դասաւանդութեան և թէ աշակերտների զար-
գացման համար: Բայց և այս կէտում չարաբաստիկ սուղ տնտեսականը
հաջգին Խոչնդոտներ է դնում:

Գրադարան, Հոգաբարձութիւնը այս տարի կարողացաւ միմիայն
96 ու տալ ձեռք բերելու դասատուութեան համար անհրաժեշտ « 2այնա-
գրեալ Շարականներ » և սրբազան - պատմութիւնը փոքրերին աւանդելու
համար անհրաժեշտ պաակերներ: Ինչ վերաբերում է ընթերցանութեան
գրքեր առնելուն, նա միջոց չունէր և ոչ մէկ կոպէկ յատկացնելու, մինչ-
դեռ գրադարանը մեծ պակասութիւն ունէր մանաւանդ մանկական և զուտ
մանկավարժական գրուածքների կողմից: Այդ ի նկատի ունենալով, դիմե-
ցինք հրատարակ վարչութեան և մասնաւոր մարդկանց նուիրատուութեան:
Բացի այդ, հաւաքուեց 23 ու ուսուցիչներից՝ մանկավարժական ամսագիր-
ներ բերել տալու նպատակով: Անցեալ տարուանից էլ գրադարանի հա-
մար հաւաքած կար 13 ու 30 կ:

Այս միջոցներով յաջողուեց այս ճեմ. տարում հարստացնել գրադա-
րանը 139 անուն (154 հատոր, 153 օր.) հայերէն գրքերով և 89 անուն
(107 հատ, 90 օր.) ռուս գրքերով ընդամենը 228 անուն նոր գիրք: Ճե-
մարանական տարուայ սկզբում դպրոցիս գրադարանը ունէր:

568 անուն (754 հատոր 677 օր.) հայ. գրք. և

259 անուն (528 հատոր 308 օր.) ռուս գրք.

1892—93 ճեմ. տարում նուիրել են գրքեր.

1) Թիֆլ. հ. հրատ. ընկեր. 51 հայեր. գիրք 51

2) Լևոն Սարգսեանց 33 հայեր. գիրք և 30 ռուս.
գիրք, ընդամենը 63

3) Աշակերտներից 16 հայ. գիրք 2 ռուս. գիրք 18

4) Պ. Ա. Բարախանեանց «Знание» ամս. 12 գիրք

5) Հեղինակներից 17 17 գիրք

Ընդամենը նուէր ստացուած է 161 գիրք

Իսկ գնուած է 67 գիրք

Տարուայ ընթացքում սեպտեմբերի 20-ից մինչև մայիսի 30-ը՝ գրադարանից օգտուել են սեմինարական (1 — VI) դասարաններից բոլոր (121) աշակերտները, որոնք վերցրել են ընթերցանութեան համար 1721 անգամ հայ գիրք և 433 անգամ ռուս գիրք։ միջին թուով մի աշակերտ կարդացել է 17 գիրք (14 հայերէն, 3 ռուսերէն)։

Գ. պատր. աշակերտները, որոնց հետ տարուայ 1. կիսում բացատրական ընթերցանութիւններ էին լինում, երկրորդ կիսամեկում իրանք գալիս էին և խնդրում գրքեր, որոնց թիւը չատքիչ է։ Գ. պատրաստ. -ից 35 աշակերտ կարդացել են 143 գիրք, կամ 1 աշակ, 4 գիրք, մինչև անգամ Բ. պատրաստականցիք ինքնաբերաբար գալիս էին և ընթերցանութեան գրքեր պահանջում։ Դոցա հասկացողութեան յարմար շատ քիչ գիրք լինելով, միայն 15 աշակերտ 30 գիրք է վերցրել։ Բացի այդ, ինչպէս վերև յիշած էինք, տարուայ ընթացքում Ա. և Բ. դ. պատրաստականներում լինում էին բացատրական ընթերցանութիւններ մոգական լրատերով կամ առանց նորան։ Մոգական լրատերով կարդացուած է «Ասրմիր դըլխարկ», «քնած գեղեցկուհի», «ծոյլերի աշխարհ» և «Ռօբինզօն»։

Ֆիզիքական կարիքներն ալ զաւով պէտք է ցաւով ասենք, որ չը նայած նրա մեծ պակասութիւններին, ոչ մի նոր գործիչ ձեռք չը բերուեց փողի պակասութեան պատճառով։ Ֆիզիկ. կարիքները այժմ կազմուած է 107 իրից, Համարեա կատարելապէս բացակայում է բնապատմական բաժինը, բացի մարդու կմախքի և թղթից շինած մի քանի ֆանտոմներից, որոնք սովորական կենդանիների արտաքին տեսքն են ներկայացնում։ Գպրոցումն ոչինչ չկար, մինչդեռ մարդակազմութիւն և բնական պատմութիւն դասաւանդելը առանց անհրաժեշտ ֆանտոմների, պրիպատարների և պատկերների, նոյն է թէ մի իր տեսնելու և նրա մասին մտապատկեր կազմելու փոխարէն՝ երևակայութեան զօռ տալով, աշխատել ստեղծել նրա մտապատկերը, Բնապատմական ժողովածու կազմելիս էլ ստիպուած էինք յոյս դնել նուիրատուութիւնների վրայ կամ սեփական աշխատութեամբ այդ անել, իսկ կարևոր ֆանտոմները վերցնել ռեալական ուսումնար. օգտուելով նրա գերեկտոր Մեծ. Պ. Ս. Տարասովի սիրելիութիւնից, Այս տարի նուէր ստացուել է 1, Պ. Ս. Իւզբաշեանից պղնձահանքերի հարուստ ժողովածու։

2. Պ. Լեոն Սարգսեանից կօրալական պօլիպների կմախք և փափկամարմինների խիտունջներ։

3. Աշակերտներից — կարմիր բալի մի քանի կտորներ։

Այժմ բնապատմական ժողովածուն կազմած է մօտ 90 իրերից, 2ի կարելի է վերջոյ շնորհակալութիւն չը յայտնել և մեծապատիւ Պ. Յով. Բարխուդարեանցին, նրա նուիրած փոքրիկ մոգական լրատերի և պատկեր-

ների ինչպէս և ոսկերիչ Գրիգոր Բաղամեանցին նրա ծաղկազարդ նկարների համար:

Մնում է մեզ յիշատակել դպրոցիս աշակերտներից պ. Ս Դէմուրեանի ղեկավարութեամբ կազմած քառաձայն խմբի մասին, որ բաղկանում է 35 հոգուց և միաձայն է խմբերի մասին, որոնք երգում էին քաղաքիս եկեղեցիներում: Քառաձայն խումբը կազմակերպուած էր արդէն նոյեմբերի 14/ից և երգում էր հերթով եկեղեցիներում: Գ անգամ Ղազանչեցուց եկեղեցում: Է անգամ Ագուլեաց, Յ անգամ Մեղրեցուց եկեղեցում: և 1 անգամ վերին թաղի եկեղեցում: Երգեցողութիւնը կանոնաւորելու համար անհրաժեշտ է նաև մի ֆիս գարմոնի, որ չունի դպրոցը, չը նախած որ առանց այդ անհրաժեշտ գործիքի համարեա անհնարին է կանոնաւոր երգեցողութիւնը:

Աերջացնում եմ այս ճեմարանական տարուայ համառօտ՝ հաշուետուութիւնը, որի մէջ աշխատել եմ որչափ կարելի է օրինակ տալ կերպով ներկայացնել դպրոցի ուսումնական մասի դրութիւնը, թողնելով զուտ տընտեսականի մասին խօսելը դպրոցիս հոգաբարձութեան, Թող Հուշուայ հասարակութիւնը, ծանօթանալով իւր սեմինարիայի ներկայ դրութեան հետ, և տեսնելով նորա բազմաթիւ կարիքները, որոնց սկզբնապատճառը ուսումնարանի տնտեսական սուղ վիճակն է՝ բուռն աջակցութիւն ցոյց տայ և սկսի ներգործական և ոչ սպասողական կամ կրաւորական դէր կատարել: Ուսումնարանի տնտեսական դրութիւնն էլ, պէտք է իմանալ որ՝ եթէ չը լինէին մի քանի խոչընդոտներ, կարող էր լիովին բաւականացնել ուսումնարանական բոլոր պահանջներին: Հուշուայ հասարակութիւնը թող լաւ իմանայ, որ ոչ միայն Հուշուայ, այլ ամբողջ Արցախի լուսաւորութիւնը մեծապէս կախուած է այս դպրոցից, և Հուշին, իբրև Արցախի կենդանական ու աւելի լուսաւոր և ղեկավարող կէտը, պատասխանատու է ամբողջ թեմի և ամբողջ ազգի առաջ: Մեր ապագան մեր ուսումնարաններն են և ոչ մի ջանք չը պէտք է խնայենք նրան բարեկարգ վիճակի հասցնելու:

Տեսուչ Դպրոցի՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ